ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Հայգիպրոգիծ» ՊՈԱԿ տնօրեն

Գրիգոր ԱՍԼԻՈՅԱՆ

«1» հուլիս 2024թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Անանա Վարդանի Վարդանյանի «ՀՀ սահմանամերձ բնակավայրերի տարածական միջավայրի ռազմադիմակայունության ճարտարապետական առանձնահատկությունները» թեմայով ատենախոսության վերաբերյալ, որը ներկայացված է ԺԸ.00.01 – «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը:

Թեմայի արդիականությունը

Պաշտպանության ներկայացրած Ա.Վ.Վարդանյանի ատենախոսությունը, նվիրված Լ. Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերում ռազմական սպառնալիքների գնահատմանը և ռիսկերի կառավարմանը՝ տարածական պլանավորման և ճարտարապետական լուծումների միջոցով:

Ներածության մեջ ներկայացվում և հիմնավորվում է ժամանակակից հակամարտությունների բնույթը և դրանց ավերիչ ազդեցությունները բնակավայրերի համար: Մասնավորապես առանձնացվում է ՀՀ սահմանամերձ բնակավայրերի նշանակություն երկրի առջև ծառացած մարտահրավերներին դիմակայելու համար:

Ատենախոսությունը, որը հայերեն շարադրված է համակարգչային տպագիր տեքստային 109 էջի վրա, բաղկացած է ներածությունից, 3 գլխից, ընդհանուր եզրակացություններից, 107 անուն օգտագործված գրականության ցանկից և հավելվածից (35 էջ):

Առաջին գլուխը (էջ 12-54) նվիրված է պատերազմի սերունդների դասակարգման և տարածական միջավայրի կազմակերպման ավանդույթներին հայկական և համաշխարհային ճարտարապետության մեջ: Հետազոտվել, հավաքագրվել և վերլուծվել են հայկական և համաշխարհային ամրոցաշինության, ժողովրդական և ժամանակակից ճարտարապետության մեջ տարածական միջավայրի կազմակերպման որոշակի լուծումներ ու առանձնահատկություններ: 21-րդ դարի ռազմական

ապառնալիքների բնութագրման համար վերլուծվել են գոյություն ունեցող հասկացությունները, տեսական դրույթները և մշակվել գնահատման չափանիշներ:

Կատարված վերլուծության արդյունքում հեղինակը հանգել է այն եզրակացության, որ Հայաստանի Հանրապետությունում, որը տարածքով փոքր պետություն է և սահմանամերձ բնակավայրերի հարաբերական մեծ թվանակ ունի, առաջանում են անվտանգային այնպիսի խնդիրներ, որոնց ուսումնասիրության համար պահանջվում է տարածական պլանավորման և ճարտարապետական բաղադրիչի դիտարկման անհրաժեշտություն: Ակնկալվող համակարգված հայեցակարգային գիտակարգը առաջարկվում է անվանել «ռազմաղիմակայունություն»:

Երկրորդ գլխում (էջ 55-77) ներկայացված են տարածական պլանավորման մեջ ռազմաղիմակայունության առանձնահատկությունները, վերլուծվել են բնակավայրերի տարածական պլանավորման առանձնահատկությունները դիտարկելով բնակավայրերի կառուցվածքային համակարգերի, կառուցապատման մեջ շենքերի և շինությունների խտության, հարկայնության, թաղամասերի տեղադրման, շենքերի, շինությունների և ենթակառուցվածքների տեղադիրքի առանձնահատկությունները: Խնդիրները դիտարկվել են ռազմաղիմակայունության համատեքստում:

Դրանց ուսումնասիրման անհրաժեշտությունը ատենախոսը հիմնավորել է ժամանակակից պատերազմների պայմաններում առաջացող մարտահրավերներին դիմակայելու անհրաժեշտությամբ: Առանձնահատուկ կարևորվել է սահմանամերձ բնակավայրերի այլընտրանքային տարհանման ուղիների, ճանապարհների և ենթակառուցվածքների առկայությունը:

Կատարվել է հաշվարկ, որի արդյունքում բնութագրվել է խոցման միջոցի կիրառման հետևանքով առաջացած ավերածային ճնշումը և ավերման աստիճանը՝ ըստ կառույցի շինարարական համակարգի:

Երրորդ գլուխը (էջ 79-100) նվիրված է ռազմաղիմակայուն ճարտարապետության ուղղահայաց և հորիզոնական հարթության տարրերի ուսումնասիրմանը: ներառվել են շենքերի և շինությունների հորինվածքային ձևերի, շինարարական համակարգի, կրող տարրերի առանձնահատկությունների ուսումնասիրությունը, խոցելի տարրերի առկայությունը և որոշակի ռազմաղիմակայուն առանձնահատկությունների սահմանումը:

Տարածական պլանավորման առանձնահատկությունները դիտարկվել է 3 հարթության մեջ:

Տպագրված 5 աշխատանքները արտացոլված են ատենախոսության բովանդակության մեջ:

Ատենախոսության վերաբերյալ կա հետևյալ դիտողությունը.

Հաշվի առնելով առկա իրողությունների զարգացումները և ՀՀ փոքր ռազմավարական խորությունը, թերևս արժի առաջարկվող լուծումները փորձարկել ՀՀ տարածքի բնակավայրերից որևէ մեկում: Այլ էական դիտողություններ չկան:

Եզրակացություն: Վերը շարադրածը թույլ է տալիս հանգել հետևյալ եզրակացությունը.

Աննա Վարդանի Վարդանյանի «ՀՀ սահմանամերձ բնակավայրերի տարածական միջավայրի ռազմադիմակայունության ճարտարապետական առանձնահատկություններ» թեմայով ատենախոսությունը ավարտուն աշխատանք է, պարունակում է ինչպես գիտական, այնպես էլ գործնական նշանակության կարևոր նորույթներ ու լիովին բավարարում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման գործող կանոնակարգով թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին:

Աննա Վարդանի Վարդանյանը միանգամայն արժանի է ԺԸ.00.01 – «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունում ներկայացված վերջնարդյունքներն ու առաջարկությունները, ՀՀՇՆ 31-03-2022 «Քաղաքաշինականապահովության պաշտպանական կառույցներ» շինարարական նորմերով սահմանված հիմնադրույթների զուգորդմամբ, կարող են օգտագործվել ՀՀ սահմանամերձ բնակավայրերի համար տարածական միջավայրի ռազմադիմակայուն ճարտարապետական միջոցառումների հայեցակարգ մշակելու և իրականացնելու համար:

Կատարող՝

«Հայնախագիծ» ԲԲԸ ճարտարապետ Ս. ՔԱԼԱՇՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

ԱՆՆԱ ՎԱՐԴԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ՝ «ՀՀ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՌԱԶՄԱԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» թեմայով ատենախոսության մասին

ԺԸ.00.01 «ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսությունը բաղկացած է տեքստային և գրաֆիկական մասերից: Տեքստային ծավալը 109 էջ է, կազմված է ներածությունից, երեք գլուխներից, ընդհանուր եզրակացություններից, 107 անուն օգտագործված գրականության ցանկից և 35 էջ հավելվածից:

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են ատենախոսության նպատակը և հիմնական խնդիրները, հետազոտության մեթոդաբանությունը, օբյեկտը և առարկան, ժամանակագրական և աշխարհագրական սահմանները, գիտական նորույթը, գործնական արժեքը, արդյունքների հնարավոր ներդրման ուղղությունները և տեղեկություններ թեմայի վերաբերյալ հրատարակված աշխատանքների մասին:

Հետազոտության արդիականության հիմնավորման մեջ նշված է, որ ռազմական փորձագետների տեսակետների հետահայաց վերլուծությունը, ինչպես նաև ռազմական գործողությունների հնարավոր թատերաբեմերի ներկա վիճակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ռազմական գիտության մեջ բավարար ուշադրություն դարձված չէ տարածական պլանավորման, ռազմական-աշխարհագրական հայեցակարգերի ուսումնասիրությանը: Զարգացող նոր սերնդի պատերազմների բնույթը, հատկապես քաղաքային մարտերի և ռմբակոծությունների տարածվածությունը, ինչպես օրինակ Արցախում, Ուկրաինայում, Իսրայելում և Պաղեստինում, ապացուցում են թվացյալ անվտանգ բնակավայրերի խոցելիությունը:

Հետազոտության նպատակ է սահմանվել ՀՀ սահմանամերձ բնակավայրերում ռազմական սպառնալիքների գնահատումն ու ռիսկերի կառավարումը՝ տարածական պլանավորման և ճարտարապետական լուծումների միջոցով:

Հետազոտության հիմնական խնդիրներ են՝

- Վեր հանել պատերազմի սերունդների դասակարգման համատեքստում տարածական միջավայրի կազմակերպման ավանդույթները հայկական և համաշխարհային ճարտարապետության մեջ, սահմանել տեսական դրույթներ:
- Ուսումնասիրել ռազմադիմակայունության առանձնահատկությունները տարածական պլանավորման համատեքստում և մշակել հավանական ռիսկերի

կառավարման որոշակի գործնական դրույթներ:

- Վերլուծել ռազմադիմակայուն ճարտարապետության ուղղահայաց և հորիզոնական հարթության տարրերը և առաջարկել համապատասխան գործնական դրույթներ:

Հետազոտության առարկան տարածական միջավայրի ռազմադիմակայունության առանձնահատկություններն են՝ դիտարկելով դրանք զենքերի ավերիչ ազդեցության, անվտանգության ապահովման միջոցների, բնակավայրերի կառուցվածքային համակարգի, կառուցապատման առանձնահատկությունների, շենքերի և շինությունների ծավալատարածական հորինվածքի և հարդարման նյութերի համատեքստում:

Այս առումով, պետք է փաստել, որ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերի տարածական պլանավորման մեջ վերհանված չեն ռազմական սպառնալիքների նկատմամբ առանձնահատուկ, դիմակայուն լուծումներ, որոնք միտված կլինեն ապահովել հավանական ռիսկերի կառավարումը:

Ժամանակագրական առումով ատենախոսության մեջ ուսումնասիրվում է նորագույն, 21-րդ դարի պատերազմների փորձը և տարածական միջավայրի առանձնահատկությունները՝ պատմական անցյալի փորձի հետահայաց վերլուծությամբ: Քննվում են պատերազմների սերունդների դասակարգման և համապատասխանաբար տարածական պլանավորման առանձնահատկությունները՝ կենտրոնանալով յուրաքանչյուր ժամանակաշրջանին բնորոշ ռազմական մարտավարությունների, օրինաչափությունների, սպառնալիքների և ռիսկերի վրա:

Աշխարհագրական առումով հետազոտության առարկա են ինչպես հայրենական փորձը, մասնավորապես հաշվի առնելով սահմանամերձ բնակավայրերի առանձնահատկությունները, այնպես էլ բնակավայրերի ռազմադիմակայության համաշխարհային լուծումները՝ կենտրոնանալով Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերի պայմաններում դրանց կիրառելիության վրա:

Որպես հետազոտության գիտական նորույթ են դիտարկված՝ ռազմական միջոցների կիրառման նկատմամբ դիմակայունության բնութագրման համար առաջարկվող տերմինաբանությունը, ՀՀ սահմանամերձ բնակավայրերի ճարտարապետության մեջ ռազմադիմակայունության խնդիրները, ինչպես նաև ռազմադիմակայունության տեսական և գործնական դրույթները:

Ներկայացված են նաև օգտագործված աղբյուրները, որոնք ընդգրկում են նորմատիվ ակտեր, ռազմական ոլորտի, տարածական պլանավորման և ճարտարապետության վերաբերյալ հրապարակումներ:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքները հրատարակված են 5 գիտական հոդվածներում, որոնցից 2-ը՝ Scopus գիտատեղեկատվական շտեմարաններում

ընդգրկված պարբերականներում:

Առաջին գլխում՝ «Պատերազմի սերունդների դասակարգումը և տարածական միջավայրի կազմակերպման ավանդույթները հայկական և համաշխարհային ճարտարապետության մեջ», հավաքագրվել, քննվել և վերլուծվել են պատերազմի տարբեր սերունդների ազդեցությունը տարածական միջավայրի վրա, հայկական ամրոցաշինության որոշ առանձնահատկությունները, հայկական ժողովրդական ճարտարապետության և տարածական միջավայրի ձևավորման առանձնահատկությունները պաշտպանական տեսանկյունից, Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի քաղաքաշինական զարգացումները 21-րդ դարում և ներկայիս դրությունը, ընդ որում, թվարկված ուղությունները դիտարկված են նաև միջազգային զուգահեռների համատեքստում:

Ներկայացված են նաև աշխատության տեսական դրույթները և մեթոդաբանության առանձնահատկությունները:

Առաջին գլուխն ավարտվում է դրա բովանդակությանն առնչվող վեց եզրակացություններով:

Երկրորդ գլխում՝ «Տարածական պլանավորման մեջ ռազմադիմակայունության առանձնահատկությունները», վերլուծվել են բնակավայրերի տարածական պլանավորման և կառուցապատման առանձնահատկությունները՝ ռազմադիմակայունության համատեքստում դիտարկելով բնակավայրերի կառուցվածքային համակարգերի, կառուցապատման մեջ շենքերի և շինությունների խտության, հարկայնության, թաքստոցների տեղաբաշխման, շենքերի, շինությունների և ենթակառուցվածքների տեղադիրքի առանձնահատկությունները: Գլուխն ամփոփվում է յոթ եզրակացությունով:

Երրորդ գլխում՝ «Ռազմադիմակայուն ճարտարապետության ուղղահայաց և հորիզոնական հարթության տարրերը», ներառվել են շենքերի և շինությունների հորինվածքային ձևերի, շինարարական համակարգի, կրող տարրերի, շինարարական նյութերի, հատակագծային լուծումների, արտաքին և ներքին կահավորման առանձնահատկությունների ուսումնասիրությունը, խոցելի տարրերի առկայությունը: Քննվել են նաև կառույցների ծավալատարածական լուծումները, համաչափությունները, մոդուլային համակարգերի առանձնահատկությունները:

Ընդհանուր եզրակացություններում սահմանվել են ռազմադիմակայունության տեսական և գործնական դրույթներ ՀՀ սահմանամերձ բնակավայրերի համար:

Կարելի է փաստել, որ հետազոտությունը գիտական նշանակությունից բացի ունի նաև գործնական ու կիրառական որոշակի դրույթներ, որոնք կարող են օգտագործվել ՀՀ սահմանամերձ համայնքների և բնակավայրերի համար ռազմադիմակայուն գիտակարգային հայեցակարգեր մշակելիս: Դրանք միաժամանակ կարող են նպաստել

բնակավայրերի տարածքային պաշտպանության կազմակերպմանը և բնականոն կենսագործունեության պահպանմանը, ինչպես նաև նվազեցնել ռազմական գործողությունների ընթացքում և դրանից հետո առաջացող նյութական վնասները:

Կարելի է փաստել նաև, որ հետազոտությունն իր ամբողջության մեջ անդրադառնում է մեր երկրի արդի իրողություններով պայմանավորված այնպիսի կարևոր հիմանախնդրի, ինչպիսին ռազմական սպառնալիքի նկատմամբ տարածական միջավայրի դիմակայունության ապահովումն է: Այս ենթատեքստում ատենախոսության մեջ սահմանվել են ՀՀ սահմանամերձ բնակավայրերի ռազմադիմակայունության նվազագույն պարտադիր պահանջներ, որոնք ներառում են տարածական պլանավորման համակարգում կառուցվածքային ապակենտրոնացված համակարգը՝ բնականոն կենսագործունեության այլընտրանքային սպասարկման հնարավորություններով, կառուցապատման նվազագույն խտության և էներգիան կլանող հենքային մակերևույթների կիրառումով ռազմական խոցման միջոցների առաջացրած վնասների նվազեցումը, մոդուլային համակարգերի կիրառման առավելությունները, ռազմադիմակայունության բարձրացման և վնասների նվազեցման համար շենքերի և շինությունների արտաքին (թաղանթային ճակատներ, դարավանդաձև ծավալներ) և ներքին (կրկնակի մուտքեր, արտաքին պատերից որոշակի հեռավորությունների պահպանում, ներսույթի կահավորում քիչ բեկորներ առաջացնող նյութերով) առանձնահատուկ ճարտարապետական լուծումները և այլն:

Հարկ է նշել, որ ատենախոսության հավելվածները և գրաֆիկական նյութերը լիարժեքորեն արտահայտում և վերը նշված դրույթները՝ հանդիսանալով դրանց պատշաճ հիմնավորման շոշափելի գործոններ:

Գնահատելով հետազոտության արժանիքները, հարկ ենք համարում ներկայացնել որոշ նկատառումներ դրանում տեղ գտած առանձին ձևակերպումների և խնդիրների առնչությամբ.

1.Առանց շեղվելու ատենախոսության գիտական նորույթի ներկայացման բովանդակությունից (էջ 8), կարծում ենք, որ այն կարելի է ձևակերպել հետևյալ խմբագրմամբ՝

«Սահմանվել է «Ռազմադիմակայունություն» եզրույթը՝ որպես ռազմական սպառնալիքների դիմակայման մեթոդների ու գործիքների ամբողջություն, գնահատվել են սահմանամերձ բնակավայրերի ճարտարապետության մեջ ռազմադիմակայունության խնդիրները և սահմանվել են ռազմադիմակայունության տեսական ու գործնական դրույթները:»

2.Փոքր-ինչ տարակուսանք է առաջացնում հետազոտության գործնական արժեքի ներկայացման վերջին պարբերության՝ *«Հակառակորդի համար մեծացնել պատերազմի նյութական արժեքը»* ձևակերպումը (էջ 8).

3.Կարծում ենք, որ լավագույն տարբերակը չի ընտրված աղբյուրների հղումների համար: Դրանք ներկայացված են այբբենական կարգով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն հաջորդականությամբ, սակայն այս պարագայում առկա են որոշակի շեղումներ՝ աղբյուրների 19, 28, 29, 36, 37, 38 կետերը դուրս են այդ տրամաբանությունից: Ավելի արդյունավետ կլիներ դրանք ներկայացնել տեքստում առկա հաջորդականությամբ:

4.Աղբյուրներում ցանկալի էր տեսնել նաև թեմայի առնչությամբ հայաստանյան գիտական հրապարակումների ավելի լայն շրջանակ:

Ներկայացված նկատառումները չեն նսեմացնում հետազոտության գիտագործնական նշանակությունը: Կարծում ենք, որ այն արժանի է պատշաճ ուշադրության՝ մեր երկրի անվտանգային հարցերով զբաղվող պետական կառույցների կողմից:

Ելնելով վերը շարադրվածից, գտնում ենք, որ Աննա Վարդանի Վարդանյանի՝ «ՀՀ սահմանամերձ բնակավայրերի տարածական միջավայրի ռազմադիմակայունության ճարտարապետական առանձնահատկությունները» թեմայով ատենախոսությունը լիովին բավարարում է ՀՀ կառավարության 1997թ. օգոստոսի 8-ի N 327 որոշմամբ (ՀՀ կառավարության 2023թ. Նոյեմբերի 2-ի N 1901-Ն որոշման խմբագրմամբ) հաստատված կարգի 7-րդ կետի պահանջներին՝ որպես ճարտարապետության բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի առաջադրում և լուծում, իսկ դրա հեղինակը՝ Աննա Վարդանի Վարդանյանն արժանի է ԺԸ.00.01 «Ճարտարապետություն» մասնագիտությամբ գիտության թեկնածուի աստիճանի:

Ճարտարապետության դոկտոր, դոցենտ Սարգիս Թովմասյան

02.07.2024թ.

Ճարտ. դոկտոր Ս.Ա.Թովմասյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՃՇՀԱՀ-ի գիտական քարտուղար,
տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ.Հ.Լևոնյան

03.07.2024թ.